Universitäts- und Landesbibliothek Bonn

Bank' xratowc' naxni imastasirac'

I Venetik, 1853

urn:nbn:de:hbz:5:1-12087

Visual Library

Сойсем 3088 (1)

ՍՈՓԵՐՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

U.

Հ 3088

ԲԱՆՔ ԽՐԱՏՈՒՑ

ՆԱԽՆԻ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Գործարանի Մխիթարեանց

1853

3088

ՊԱՏՃԱՌՔ

ՍՈՓԵՐԱՑՍ ՀԱՅԿԱԿԱՆԱՑ

Զանտխեղծան և զգեղագոյնս յարդեանց տխեղծացեալ և գե-
ղատխուր հայրենեաց մերոց, զերկունս բանաւորս արդասու մտաց
հարց և հիմանց տանս Թորգոմայ, զընտիր ընտիր գիւանն ասեմ
հայերէն գպրութեանց, 'ի քան և եւթն ամաց հետէ 'ի շար մատե-
նագրութեան արկեալ և գրոշմա-
գիծ հրատարակեալ՝ յերկուս չափս,
'ի մեծ և 'ի փոքր, զմին Մատենա-
գրութիւնս Նախնեաց կոչելով և
զմիւսն Ընտիր Մատենագիրս,
տուաք հատորս բանից առաւել

քան զերեսուն, 'ի վայելս մերոց
բանասիրաց. յորոց թէպէտ և ըստ
յուսոյ մերոյ գտաք զնոսին յար-
դեալս, մինչ և ոմանց յայնցանէ եր-
կիր և երիր ընդ մամուլ անցանել
տպագրութեամբ, այլ արդեօք ո՛չ
ըստ չափու փափաքանացս և ոչ ըստ
արժանեաց այնքան նոցին պա-
տուականութեանն՝ մեծարեալս.
և այս 'ի թուլութենէ՞ իմեքէ ար-
դեօք ուսումնասիրութեանն ջա-
նից, ըստ սրտառուչ մեղադրութեան
Քերդողահօրն մերոյ, եթէ առ ան-
ձեռնհասութեան 'ի ստացուած
ստուար մատենից, ոչ է մեզ դա-
տել ատանօր: Բայց մեզ կամ է-
ղեւ բանալ և հեշտին ևս ճանա-
պարհ դիւրադնալի փափաքողացն
'ի դիւտ հանճարիմաց վայելից եր-
կոց նախնեաց իւրեանց իմաստասի-
րաց, միանգամայն և դիւրամա-
տոյցս ընծայել ճաշակս յառհա-

սաստչեայ մթերից մատենագրու-
թեանց. և ձեռն արկաք տալ 'ի
լոյս ընտրանաւ զչև ևս հրատարա-
կեալ բանս նախնեաց՝ որ օրինա-
կագիր և որ թարգմանած, 'ի մա-
տենկունս փոքունս, առձեռն և
գիւրատանալի, զորս և ՍՈՓԵՐՍ
ՀԱՅԿԱԿԱՆՍ անուանեմք. և մերձ
ընդ մերձ հրատարակեմք՝ ոչ այն-
քան կարգի ժամանակի մատենա-
գրացն կամ նիւթոյ բանից պատ-
կառ կալով, որքան փափագատենչ
և զուարճալի և պիտանացու գը-
րուածոցն. ցանկանալով կարգել
զնոսին յօգուտ և 'ի զբօսանս և՛
հետաքննիցն բանասիրաց և՛ դե-
ռակիրթ համբակաց, և մանա-
ւանդ յեռանոցս նախաշաւիղս յար-
դարել զնոսին առ կատարեալ և
խմբագիր մատենադարան հայ գրա-
լուութեանց:

Այլ ճառել զաղնուութենէ Սո-

փերացս՝ Ջան աւելորդ վարկա-
նիմք, տի նա ինքնին սպասեալ
մնամք զայնր վկայութիւն յընթեր-
ցանելեացն փութոյ ուսանել, յո-
րոց և զմերոյս՝ 'ի սոցին հրատարա-
կութեան զդուշնաքեայ վաստա-
կոյս՝ ընդունել վարձս, զհաճու-
թիւն իւրեանց և զօգուտ:

Զնախնի Խմաստասիրացն բանս,
զորս իբր երախայրիս Հայկական
Սուիերաց՝ ընծայեմք 'ի վայելս մե-
րոյ ժողովրդեան, հաւաքեալ ամ-
փոփեցաք՝ 'ի հինգ և աւելի գրչա-
գիր մատենից, յորս ցրիւ սփռեալք
էին: Յոճոյ և 'ի հանգամանաց
թարգմանութեան քաջայայտ տե-
սանի՝ երկասիրեալ յայն ուրուն
յերանաշնորհից մերոց թարգման-
չաց, և կարգեալ 'ի խրատ ուսու-
մնասէր մանկուոյ:

Բ Ա Ն Փ

Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Ց

Ա.

Իմաստութիւն.

Պղիտարքոս ասէ. Ճանապարհորդք՝ ի տուն և՝ ի հայրենիս փութան, և իմաստունք՝ ի խելս և ի մտաստութիւն:

Ի խորհելն քո օրինակ առ զանցեալն՝ ապառնոյն. քանզի անհրեւելին յերեւելեացն փութով տայ զգիտութիւն:

Որ վան անձին անբարի խորհի. այլուամ բարի ոչ կարէ խորհել:

Մի՛ խորհել զհեշտալին այլ զաղ-
նիւն ։

Յաճախեա խորհել նախ քան
զառնելն ։

Ի գործ մարմնոյ՝ զօրութեան
պէտք են . իսկ զոգտակարն խորհել՝
խելացն ։

ՅԲիանդոս հարցեալ թէ ո՞վ է
խորհրդակից աղնիւ , ասէ . Ժամա-
նակն ։

Բաբիոս իմաստասէր ասէ . Պարտ
է զաւարտն տեսանել և ապա ձեռն-
արկել՝ի գործ ։

Դիմոկրատէս ասէ . Փոփոխումն
՝ի տեղեաց կամ ՝ի տերանց , ոչ
խելս բուսուցանեն և ոչ զանիմաս-
տութիւն բառնան ։

Իրոդէս ասէ . Իմանալ զբարի և
քաղցր խօսել՝ ՝ի մի համարի են ։

Դիոդորոս ասէ . Իմաստուն խոր-
հուրդ վեհագոյն է քան զձեռս
հզօրաց ։

Պիւթագոր ասէ . Ոչ զերիվար
առանց սանձաց , և ոչ զիմաստու-
թիւն առանց խելաց ստանալի է ։

Ողջախոհագոյն է քան դիպիլ

կրիցն և ամբարտաւանիլ, նախ 'ի դիպելոցն պատրաստիլ և պահել զանձն իւր, զի մի դիպեսցի կրիցն։

Զ Աղեքսանդր յօժարեցուցանէին բարեկամքն ստանալ որդիս. և նա ասէ. Մի՛ տագնապիք, քանզի թողում ձեզ յետամնաց զբանս և զնմանութիւն և զարիութիւնս իմ։

Սա իբրև ելանէր 'ի պատերազմ 'ի տղայութեան, ասէ Արիստոտէլ. Համբերեա մինչև յաւուրս կատարեալ հասակի քոյ։ Ասէ. Երկընչիմ, գուցէ կորուսանեմ զերիտասարդական համարձակութիւնս։

Ղակոն իմաստասէր քանզի կաղ էր և երթայր 'ի պատերազմ, ասեն ցնա. Զի՞ գործես, զոր չէ պարտ. և նա ասէ. Ոչ փախչողաց է յաղթել, այլ դադարողաց և ջանուսից հանդերձ խելօք։

Զօրութիւն որ զմիտս և զնմանութիւն ոչ ունի՝ գերեզմանի մատնէ զունողս իւր։

Ղեւոնիդէս լակեդեմոնացի քանզի սակաւուք երթայր 'ի պատերազմ, ասեն ցնա. Սակաւ են զոլքդ. և նա ասէ. Սակաւք են՝ բայց յօժարք են։

Մոնիոս ասէ. Յափշտակեա զբարեբարոյք մեռանելն՝ յորժամ պարտ է, զի մի փոքր ինչ յետոյ՝ զմեռանելն յափշտակես, իսկ զբարիոքն ոչ։

Պիւռռոս երթայր 'ի պատերազմ յոյժ սպառնալեօք 'ի վերայ Ղակեդեմոնացւոցն. յարուցեալ ոմն 'ի ծերոցն ասէ. Եթէ Աստուած է որ սպառնայ՝ մի երկնչիք, քանզի ոչ զոք անիրաւեցաք. ապա թէ մարդ է որ սպառնայ՝ գիտասցէ զի արանց սպառնայ։

Եմպեդոկրատէս ասէ. Ոչ գտի իմաստունս բանի. ասեն ցնա. Որ խնդրէ իմաստուն, նախ պարտ է զի ինքն իցէ իմաստուն։

Զդիոգոր հարցեալ թէ զի՞նչ ծանր բառնայ յիւրմէ երկիր, ասէ. Զմարդ անհրահանգ։

Դիմոկրիտէս՝ քանզի պատանի ոմն նստեալ 'ի թէատրոնի ասէր զանձնէ իմաստուն գոլ, քանզի ընդ բազումս խօսեալ եմ իմաստունս, ասէ. Եւ իմ ընդ բազում մեծատունս, բայց սակայն մեծատուն ոչ եմ։

Զգաստից ընդ արբեցողս և իմաստից ընդ անմիտս խօսել չէ պարտ։

Ստիպղոն մեգարացի 'ի կողոպտել քաղաքին Իւրոյ 'ի Դեմետրէ բռնաւորէ, և յափշտակել ընչից Իւրոց, ըմբռնի և ածի առ Դեմետրէս. և 'ի հարցանելն նմա թէ զի՞նչ կորուսեր, ասա՛ զի ժողովեցից և 'ի մի հաւաքեցից և տաց քեզ, ասէ. Յիմոցն ոչ բնաւ. քանզի զոր ունիմ՝ ինձ ունիմ, զբանս և զիմաստութիւնս, և ունեցայց անբաւնալի. իսկ յափշտակեալն ոչ ինչ առաւել իմ են քան թէ պաշարողաց քաղաքիս։ Եւ երկրորդ անդամ հարցանէ զնա Դեմետրէ ասելով, քանզի սիրէր զնա 'ի հին ծանօթութենէ. Ասա՛, ո՛ Ստիպղոն, միթէ յափշտակեցաւ՞ ինչ. ասէ. Ոչ բնաւ. ոչ եղինք իմ զլուծ տեսին կամ զվար, և ոչ զիս երիվար. և ոչ 'ի զինուորական սուսերաց 'ի վերայ ուսոց տեսեալ եցեմ, բաց յայսմ օրէ։

Փիլիստոն ասէ. Իմաստից առաւել հոգ տարցիս քան թէ ընչից.

քանզի նովաւ ստանին ինչք, իսկ ընչիւք ոչ ստանի իմաստութիւն։

Կրատէս իմաստուն ասէ. Սկիզբն գիտութեան՝ գիտութիւն գիտութեանց։

Բ

Որոշումն.

Արիստոտէլ ասէր իւրոց աշակերտացն. Ինչս այնպիսի ստանալ որ 'ի նաւակոծութեան և յընկղմման ժամանակի լուղայ զհետ 'ի ծով։

Թէոփրաստոս անհմուտ քերթողի ունկն դնէր, և ասէն ցնա. Զո՞ր ասես դու բարիոք. և նա ասէ. Զոր ոչ է քո ուսեալ։

Իմաստասէր ոմն երկուս ստացեալ աշակերտս, ոմն ջանացող և անմիտ և միւսն մտացի և հեղգ. և ընդ չուսանելն նոցա, 'ի բաց վարեաց յինքեանէ ասելով. Ի կորուստ

Էլնցին Երկոքեանդ, զի մինդ կամիս և ոչ կարես, իսկ միւսդ կարես՝ և ոչ կամիս։

Վարձս մեծամեծս հասանէ վարդապետաց զի առցեն յաշակերտաց իւրեանց. և զայս այսպէս 'ի զգաստիցն, զի բազում ուսանին. իսկ 'ի մոակուրացն, զի կոծ բազում տացեն կրել։

Սոխպղոնի մեգարացւոյ դեղապործ ոմն ասէ. Ծեփեա զորմն տանդ զի նկարեցից. և ասէ. Ոչ այդպէս, նախ դեղագործեա և ապա ծեփեցից։

Տիմոթէոսի իմաստասիրի հարցին թէ ո՞ւր ուսար, կամ ո՞վ է վարդապետն քո, ասէ. Ատեանն Աթենացւոց և Հեմարանն։ Զայս ասելով ցուցանէ թէ ջանք և հրամտութիւն իրին՝ վեհագոյն է ամենայն վարդապետութեանց։

Գ.

Բարեկարոտիւն և Բարեկամք.

Եւրոպիդէս ասէ. Քաջ գիտեմ զի հարստից և իշխանաց՝ ամենայն ոք կամի սիրելի լինել. իսկ աղքատն և 'ի բուն բարեկամէն քակի։

Կալիստրատոս ասէ. Զվնչաս բարեկամին անձին քում համարեա, և 'ի քաջաշնորհութեան քում օգնեա նմա։

Դիոն հռոմայեցի ասէ. Որչափ բարեկամ ստացեալ է քո, այնչափ իմացիր ունել քեզ աչս և ականջս և ձեռս, և յամենայն կողմանց ունիցիս տեսութիւն և լուր և սիրտ և յիմանալ զօգտակարն. և եթէ ասատուած համարիս զքեզ՝ ոչ ինչ սխալեա, մի ունելով անձն և անպակաս բարութիւնս։

Կլիտարքոս ասէ. Ոսկի հրով

փորձի, և զբարեկամն վիշտք և նե-
ղութիւնք փորձեն։

Արիստոտել ասէ. Ինչա պարտ
է ստանալ վասն բարեկամաց, և ոչ
բարեկամ վասն ընչից։

Զբարեկամ հեռաւոր յիշեսջիր
առաջի տեսողաց. զի թուեսցիս և
զնոսա չմոռանալ՝ յորժամ չիցեն
մօտ։

Յաջողակ է առ'ի սիրել, որ յա-
ճախ զանիրաւելն համբերէ։

Դեմոսթենէս նախատեալ լինէր՝
յաճախ ընդ չարս շրջելով, ասէ.
Եւ բժիշկք ընդ ախտաժէտս, այլ
ինքեանք ողջ են։

Փոյթ, սիրելի, յուրախութիւնս
կոչեցեալ՝ պարտ է գնալ, իսկ 'ի
վիշտս՝ անկոչ։

Որ ոչ կարեն օգնել բարեկամաց՝
զանկարութիւն, իսկ որ ոչ կամին՝
զչարութիւն նշանակէ։

Ճշմարիտ բարեկամ զսէրն քաղ-
ցրադոյն առնէ և զտրտմութիւն
թեթևադոյն, և զերկոսեանն կրել
արուեստիւ։

Կղեոտարքոս ասէ. Որպէս զմե-

ղուն ոչ վասն խայթոցին ատես, այլ վասն պտղոյն սիրես, նոյնպէս և զբարեկամ մի յաղագս յանդիմանութեան ատեար, այլ վասն քաջամտութեանն սիրեա։

Մենանդրոս ասէ. Որք 'ի ժամանակի զբարեկամն սիրեն, ժամանակին և ոչ բարեկամին են սիրելի։

Յանզգամաց մի ստանար բարեկամս, զի մի և դու անզգամ կոչեսցիս։

Զէջ՝ խոշորութիւն ճանապարհին փորձէ, իսկ զքաջամիտ բարեկամն, սուգ և տրտմութիւնք ընտրեն։

Ոչ կարես բարեկամ ճշմարիտ ստանալ, մինչև զչարն ոչ հալածեսցես։

Եպիկուրոս ասէ. Ոչ երբէք ցանկացայ բազմաց հաճոյ լինել. քանզի որ նոցա հաճոյ էր՝ ոչ ուսայ, և զոր իմ ստացեալ էր՝ հեռի է 'ի նոցա տրամադրութենէ։

Սոկրատէս ասէ. Որք եղբարս ունին և սիրելիս խնդրեն, նման են

ոլք զիւրեանց անդաստանն թո-
ղեալ զօտարին գործեն :

Ոլք միշտ զբարեկամացն խօսին ,
որ 'ի նոցանէ հեշտութիւնքն են՝
յետոյ 'ի թշնամանս դառնան :

Պլինիոս ասէ . Որչափ առաւել
բարեգործես զբարեկամն , այնչափ
առաւել զօգուտն քո առնես . քան-
զի առ քեզ դարձեալ փոխադրին ոլք
'ի նոցանէ քաջամտութիւնքն են :

Փախչել պարտ է 'ի չարեաց սի-
րելութեանց և 'ի բարեկամաց թըշ-
նամութեանց :

Բժիշկ և սիրելի ոչ զիւրն , այլ
զօգտակարն պարտ է խնդրել :

Սեքստոս ասէ . Զխորհուրդ զոր
'ի ժամանակի սիրելութեան լուար ,
'ի լուծման սիրոյն մի յանդիմանեա-
ցես . քանզի ինքեանս անդրէն ոչ
զսիրելին՝ այլ զսէրն :

Տիմոն մարդատեաց 'ի հարցա-
նելն թէ ընդէր զամենայն մարդ
հաւատար առես , և նա ասէ . Ըզ-
չարան առեամ և զանիրաւան , և
յիրաւի է այս . իսկ զայլն առեամ ,
զի նոքա ոչ առեան զայնպիսին :

Արիստոտէլ ասէ. Հանդիպումն փորձութեանց զբարեկամն փորձէ, իսկ զթշնամին յանդիմանէ։

Սիրել զանպատեհս և առանց ժամու, հաւասար է դնելի ընդ ատելութեան։

Դ

Իշխանութիւն և Իշխանք.

Արիստոտէլ ասէ. Ոչք 'ի վերայ բազմաց ահեղք են՝ 'ի բազմաց երկնչին. զի յումմէ ամենեքեան սարսեն, և ինքն յամենեցունց սարսէ։

Դիմոկրիտոս ասէ. Ի կենցաղումս փափաքելի պարտ է լինել քան ահեղ։

Պարտ է ոչք խորհին իշխանութիւն ունել 'ի վերայ այլոց, նախ անձանց իւրեանց իշխել։

Կղիտարքոս ասէ. Ընդ անմտացն իշխանութեամբ ընտրելի է, քան թէ իշխել նոցա։

Յիշեալն հեզ էր, և ընդ իշխանութեամբ երկայնամիտ։

Թագ թագաւորի զնեալս ոչ ուսուցանէ, այլ միաքն է իշխան։

Թէ ընդ իշխանութեամբ լինել ոչ ուսար, իշխան լինել մի համարձակիր։

Պղատոն ասէ. Որք մեծամեծաց առաջի կան, մեծի զգաստութեան պէտք են։

Իշխանն և դատաւորն վասն արդարոյ աղերսիցի, և մի՛ վասն չարի և անիրաւութեան։

Աղեքսանդրոս՝ քանզի տակառապետ նորա զբմպանակ ոսկի կորուսեալ՝ խնդրէր մորմոքելով, ասէ. Պատանի, մի՛ պատժիր, զի որ ունի զնա՝ ընդ մերով իշխանութեամբ է։

Դիոգինէս ասէ. Ընդ իշխանի պարտ է կալ որպէս ընդ կրակի. մի՛ ամենևին մօտ՝ զի մի՛ այրեսցի, և մի՛ կարի հեռի՝ զի մի՛ ցրտասցի։

Ագաթոն ասէ. Իշխանն երեք իրս պարտի ունել 'ի մտի. զի իշխան մարդկան է, և միւս՝ զի իշխան օրինաւոր է, և մի՝ զի ոչ միշտ իշխան է։

Եւպանիոս Թեզբացի տեսեալ զօրս բազումս և գեղեցիկս, զի զ-րաւարս ոչ ունէին, ասէ. Ո՛ որպի-սի՛ գազան, բայց գլուխս ոչ ունի։

Եպիքտիտոս ասէ. Եթէ կամիս 'ի տան բարուոք բնակել՝ յեղանա-կեա իմաստնաբար, ընտրեա զլաւն 'ի վատթարէն, և զվաստակաւորն յանջանէն, զի մի կորուսցես տանն 'ի նմանէ եղեցի։

Դիոգինէս ասէ. Զար մեծ է ե-թէ վատթարքն լաւագունից ի՛շ-խեն. այլ և աստիկ չար, որ զան-միտս 'ի վերայ իմաստնոյն կարգեն։

Դիմոկրատէս ասաց. Իշխանին՝ երեք իրս պարտ է ունել 'ի մտի, առ ժամանակն բնութիւն, առ դի-մադարձն համարձակութիւն, և ոչք ընդ ձեռամբ են՝ բարեմտու-թիւն։

Կուտ Թագաւոր Ղակեդեմոնա-ցւոցն ասէ ցԹրակացին ոչք խրոխ-տային 'ի վերայ նորա. Եւ իմ տե-սեալ է ուղիս հեղեղաց որոսաց-եալս, այլ առ սուղ ժամանակս։

Ե

Արիստիպն .

Աղեքսանդր իրատեալ լինէր 'ի բարեկամացն 'ի գիշերի երթալ 'ի պատերազմ . ասէ . Ոչ է թագաւորական՝ գողանալ զյաղթութիւն :

Սա տեսեալ զոմն անուանակից իւր զի երկնչէր 'ի պատերազմի , ասէ . Պատանի դու , կամ զանունդ փոխեա 'ի քէն և կամ զսիրտդ :

Զ

Յաղագս ընչից .

Պլիտարքոս ասէ . Ոչ զերիվար չարագլուխ առանց սանձաց , և ոչ հարստութիւն առանց իմաստութեան զգուշութեամբ պահէ զուշնողս իւր :

Ոչ սեղան առանց հացի, և ոչ ճոխութիւն առանց զգաստութեան ունի զհեշտութիւն։

Յօր պատերազմի երկաթ լաւագոյն է քան զոսկի, որպէս 'ի կենցաղի բան քան զճոխութիւն։

Արիստոտէլ ասէ. Աղքատութիւն բազում ընչից է կարօտ, իսկ ագահութիւն ամենայնի։

Պիսիդոն ասէ. Ոչ զձի ազնիւ գովեն վասն ոսկեկուռ փոկոցն, և ոչ զմարդ վասն ընչիցն. այլ որ առաքինութեամբ և իմաստութեամբ կատարեալք լցեն։

Սոկրատէս ասէ. Արհամարհեա որ ինչս ստանայ և վայելել ոչ գիտէ, քանզի նման են որ ձիս ստանան և վարել ոչ գիտեն։

Վասն երկու պատճառի ստացցիս ինչս. մի՝ զի զհասեալ տուգանս 'ի վերայ քո դիւրաւ վճարեսցես, և միւս՝ զի 'ի վատաբաղդիլ բարեկամի՝ օգնեսցես։

Դիոգինէսի հարցին թէ ընդէր ոսկին դեղին է գունով, ասէ. Զի բազում ինդրոյս ունի։

Սորա տեսեալ զծառայս Անաքսիմէի զն բառնային բազում անօթս ոսկեղէնս և արծաթեղէնս, ասէ. Զամաչէ զայդ ամենայն ունել և զանձն իւր ոչ ունել։

Սոկրատէս ասէ. Քրտունք որ 'ի կողից իւրոց լցեն, քաջաձիք և գեղեցիկք են. նոյնպէս և ինչք յիւրոց վաստակոցն։

Մեծատանց և անառակաց ինչք՝ նման լցեն թզենեաց որ յանկոխս և 'ի դժուարին տեղիս լցեն, յորոց 'ի մարդկանէ ոչ ոք հասանէ ընդունել, այլ ագռաւք և թռչունք. նոյնպէս և 'ի նոցանէ բողք և շոգմոգք տանին։

Դիմոկրատէս ասէ. Հանապազորդ է 'ի վերայ մարդկան ցանկութիւն ընչից, և յորժամ ոչ են ստացեալ՝ այրէ. իսկ որ ստացեալն է՝ տանջէ հոգովք և թախծեալ տրրամութեամբ։

Քսենոփանէս զմեծատուն անհրահանգ՝ աղբ արծաթապատ կոչէր։

Է

Արծաթասիրութիւն.

Պղատոնիկոս ասէ. Կեանք արծաթասիրացն նման է սգաւորաց սեղանոյ, որ թէպէտ զամենայն ինչ ունին՝ բայց զայն որ ուրախ առնէ՝ ոչ ունին:

Ոչ խօսք 'ի մեռելոյ և ոչ շնորհք սիրոյ յարծաթասիրացն ոչ է պարտ խնդրել:

Մեղուք առ մեղր, և արծաթասէրք առ շահս վաղ հասանեն:

Կեանք արծաթասիրացն 'ի ցանկութեան շահիցն է. վասն որոյ և յափշտակութիւն ընչիցն՝ որպէս զթափու�արեան զմահ 'ի վերայ ածէ նոցա:

Կղիտարքոս ասէ. Արծաթասիրացն հարստութիւնքն՝ որպէս արեգակն մտանելով ոչ զոք 'ի կենդանեացն ուրախ առնէ:

Երինիմոս զի նախատիւր յումեմնէ թէ զբազում հռետորս ուսուցանես, և դու աղքատ կեաս, ասէ. Սակայն զի ոչ ուսուցի արծաթիւրել։

Դեմոսթենէս տեսանէր զարծաթասէր ոմն մեռեալ տանելով 'ի տապան, ասէ. Սա է կեանք առանց կենաց կրթեալ, զի այլոց զկեանս իւր ետթող։

Մեծատունք ջրգողի նմանեալք են. որպէս նոքա լցեալ ջրով ծարաւի են միշտ, նոյնպէս և սոքա։

Թէոպրիտէս ասէ. Բազումք 'ի մեծատանց վերահայեցողք են ընչից իւրեանց և ոչ տեսողք, քանզի անիշխան գոլով ստանին։

Արիստէս նախատեալ լինէր 'ի մեծատանէ ումեմնէ վասն աղքատութեան. և նա ասէ. Աղքատութիւն զիս ոչ պատմագրէ 'ի չար, այլ հարստութիւն քո զքեզ բազմագէմ և խառնակ ոչ սակաւ պարտաւորեացէ։

Դիմոնիդեսի հարցեալ թէ հարստութիւնն ի՞նչ է լաւագոյն ետթէ

իմաստութիւն, և նա ասէ. Ոչ գիտեմ, այլ տեսանեմ զիմաստունս կանգնեալ'ի դրունս մեծամեծաց։

Ղուկիոս ասէ. Յերկիր ելայ մերկ, և ընդ երկիր մտից նոյնպէս. ընդէր յունայն փութամ մերկ ըզվախճանն ունելով։

Արիստեմոն ասէ. Որպէս զմի գինի արբեալ, յորմէ ոմանք գինեհարին և ոմանք հեզանան, նոյնպէս և հարստութիւն։

Բէովատոս հանդիպեալ բազում գանձուց՝ անտես առնէր, և'ի վերայ անցեալ գնայր որպէս զոչինչ տեսեալ։

Մոսքինոս ասէր ընդ ումեմն. Եթէ'ի Պարսիկս էիր ծնեալ՝ ոչ փութայիր բնակել յԵլլադա, այլ անդ կայիր բարեբախտեալ. և արդ յաղքատութիւն ծնեալ՝ ընդէր փութաս հպարտանալ, և չկեաս այնպէս բարեբախտեալ։

Թէոդինդէս ասէ. Ոչ աղօթեմ հարստանալ, նա և ոչ ցանկամ. այլ եղիցի ինձ կեալ'ի սակաւուց և մի ունել ինձ չար։

Սոկրատէս ասէ . Մեծայիացս կարծեա մի՛ զայնս՝ որ զմեծագոյնս և զլայն ագանին , որպէս թէ կարողք լցեն , այլ զայնս՝ որ չափաւորացն լցեն սիրողք , և կարողք յորս և ձեռնարկեն :

Ընդ Դիմոկրիտէս հարցեալ ոմն թէ ո՞րպէս եղիցի ոք մեծատուն , ասէ . Թէ ցանկական բնութեամբն աղքատ լցէ :

Ի մեծամեծ ախտիցն ազատեալ լցեն աղքատքն , 'ի սպառնալեաց , 'ի նախանձուէ և յատելութենէ , որում՞ մեծատունք հանապազ բնակակիցք լցեն :

Ը

Յաղագս փառաց .

Պղնտալրքոս ասէ . Տունկք յարմատոց աճեն և փառք 'ի հեզութենէ :

Արիստոտէլ ասէ . Իշխանութիւն մեծ է ոչ ընդունել պատիւ , այլ

արժանի պատուոյ զանձն կացու-
ցանել։

Սոկրատէս ասէ. Որոց փառաց
ցանկայ ոք՝ նոցին և բարեաց գոր-
ծոց։

Աղեքսանդրոս Թագաւոր Հնդկի
ումեմն աղեղնաւոր գոլ, և համա-
րելոյ 'ի մատանին հարուլ, հրամայէ
ցուցանել զայս. և նա ոչ կամեցաւ
առնել։ Իսկ Աղեքսանդրոս բար-
կացեալ, հրամայեաց սատակել
զնա, և առեալ տանէին 'ի տեղի
սպանմանն, և հարցանէին մեղա-
դրանօք. ասէ ցտարողն. Ժամանակ
բազում է՝ յորում զաղեղն 'ի
ձեռն ոչ առի, և յանկանելոյն 'ի
փառաց երկեայ։ Զայս վաղվաղա-
կի ծանուցին Թագաւորին. և նորա
զարմացեալ յոյժ, արձակեաց զայ-
րին՝ ձիր բազում շնորհելով նմա,
զի մանաւանդ զմահ յանձն էառ,
քան փառացն անարժան երևել։

Թէոփրաստոս ասէ. Զպատիւ և
զշնորհս ոչ 'ի ձեռն բանից պարտ է
խնդրել, այլ 'ի ձեռն բարեաց գոր-
ծոց։

Թ.

Յաղագս Մահուան և փոխելոյ 'ի կենաց.

Արիստոտել ասէ. Ի կենաց աշխարհիս որպէս 'ի սեղանոյ պարտ է յառնել. ոչ քաղցեալ և ոչ յագեալ, ոչ ծարաւ և ոչ արբեալ:

Որք 'ի ժամ մահու կտակս գրեն, նման են որք 'ի ժամանակի նաւակոծութեան զհարկաւոր նիւթս որոնեն:

Պղիտարքոս ասէ. Լաւ է մեռանել՝ քան մեղք զոգին խաւարեցուցանել:

Սոկրատէս ասէ. Լաւագոյն համարեա զբարուք մեռանելն, քան ապրել չարաչար:

Ռամեսէս թագաւոր, քանզի որդի նորա մեռեալ էր, և իմաստասէրք նորա գրեցին այսպէս. Մինչ

ոչ էր, ոչ տրամէիր, մի և այժմ յորժամ ոչ է՝ տրտմեցիս. զի զկնի նորա փոքր մի և դու ոչէանաս։

Դիոգինէս տեսեալ զոմն ողբալով զի յօտարութեան մեռանէր, ասէ. Զի՞ լաս ուռնայն. ամենայն տեղւոյ Ճանապարհ՝ մի է 'ի գժոխըս ('ի գերեզման)։

Եւրիպիդէս ասէ. Պարտ է զնոր ծնեալս ողբալ, զի 'ի չարիս գան. իսկ զվախճանեալսն խնդութեամբ յուղարկել։

Եպիկուրոս ասէ. Առ ամենայն ինչ զգուշութիւն հնար է. իսկ յաղագս մահու ամենայն մարդիկ 'ի քաղաքս անպարիսպս են բնակեալ։

Մոնիոս ասէ. Ի վերայ մեռելոյ մի երբէք տրտմեցիս, քանզի հարկ ելցէ արդեօք մեռանիլ. այլ 'ի վերայ այնոցիկ որ չարաչար մեռանին։

Սեկունդոսի տեսեալ զոմն զի առ վտանգի մահ կոչէր անձին, ասէ. Ով դու, ընդէր կոչես զայն, որ թէպէտ դու ոչ կոչես՝ ինքնակոչ դայ։

Սոկրատէս յասելն ցնա թէ Ա-թենացիքն վճիռ մահու հասին 'ի վերայ քո, ասէ. Նախ քան զնոսա՝ բնութիւնս։

Սա հարցեալ թէ զինչ են դը-ժոխք, ասէ. Ոչ ես անդ երթեալ եմ, և ոչ անսի ոք ելին։

Անաքսագորաս ասէ. Երկու վար-դապետութիւնս գիտեմ վասն մա-հու. մի՝ զժամանակն որ նախ քան զլինելն, և մի՝ զքուն։

Սա դանելով երբեմն 'ի բռնաւո-րէ, և ասէ. Հարէք զպարկն Անաք-սագորեայ, զի զԱնաքսագորաս ոչ կարէք հարկանել։

Կուսիանացիքն լան զծնեալսն և երանեն զվախճանեալսն։

Սէքստոս ասէ. Որովհետև հոգի ոչ թաղի ընդ մարմին, և ոչ է պարտ զարդարել զդիակն։

Գերեզմանի հաւատարիմ սիրե-լի ոչ ոք է։

ԶԱնաքսագորաս հարցին թէ ո՞ւր թաղեսցուք զքեզ. ասէ. Ես ոչ մե-ռանիմ և ոչ թաղիմ. իսկ ամենն իմ ո՞ւր և ընկեսցի՝ պատշաճ է։

Սեկունդոս զմահն քուն ասաց, և երկիւղ մեծատանց և խղճք աղքատաց։

Փիլիստոն ասէ. Զհոգի մահ ոչ կորուսանէ, այլ անմաքուր կեանք։

Պլութարգոսի հարցին թէ քանիսն է մարդկան կենցաղս. 'ի վերս ելեալ 'ի տանիս՝ յառեցաւ ասկաւ։

Ուրիոնն իմաստասէր ասէ. Զար է մահ. և զինչդ էար զի ոչ զգամք։

Ժ

Վասն շաւղգուրքեան.

Դեմոսթենէս ասէ. Որպէս զցորեան ոչ 'ի գեղեցիկ դաշտէ և յարտէ գովեմք, այլ որ հաց գեղեցիկ լինի 'ի կերակուր, և ոչ զայր 'ի յազգէ ազնուէ, այլ որ բնութեամբ և յեղանակաւ լաւագոյնք իցեն։

Զսա հարցեալ թէ ո՞յք իցեն քաջատոհմն, ասէ. Որք յաղթեն փառաց և ընչից և հեշտութեանց և

կենաց անցաւորաց. և որ սոցին հա-
կառակացն վեհագոյնք լցեն՝ աղ-
քատութեան և անփառութեան,
ցաւոց և մահու։

Եւրոպիդէս ասէ. Եւ ոչինչ է
բարեսոհմութիւն ընչիւք. զի զա-
մենայն վատթարս ինչք մեծացու-
ցանեն, և յառաջինսն կացուցին։

Թէոպիտոս ասէ. Քաջազգի ա-
սեմ՝ ոչ որ 'ի գեղեցկաց և 'ի բա-
րեկեցաց լցեն ծնեալ, այլ որ զգե-
ղեցիկսն և զբարին եկեալ գործի-
ցեն։

Զենոն ասէ. Ոչ է պարտ ընտրել
որ 'ի մեծամեծ քաղաքաց լցեն,
այլ որ մեծք 'ի քաղաքաց եղանիցեն։

Թէոպիդէս ասէ. Ի քաջազգու-
թիւն մի ոք պարծեսցի. զի մի կաւ
ունին ամենեքեան 'ի նախնեաց. ոք
'ի ծիրանիս լցեն և ոք 'ի խոր աղ-
քատութեան մահալիցք են։

Սոկրատէս նախատեալ լինէր թէ
'ի հարց աներեւանից լցես. և նա
ասէ. Այդ է իմ գովութիւն, զի
յինէն սկսանի ազգ իմ։

Եւկլիտոս ասէ. Յոլովք գտանին

կերպիւ քաջատոհմիկ, իսկ մտօք վատազգի։

Եպիքարմոս ասէ. Խեղդիմ քաջազգի ասել ումեք, յորժամ բնութեամբ և վարուք վատազգի գոլ. զի զինչ հալորդի կուրի հայելի։

ԺԱ.

Յաղագս Լռութեան.

Պղիտարքոս ասէ. Զոր լռելն խորհիցես, մի ումեք ասիցես. և զի յայլոց պահանջես զհաւատ լռութեան՝ զոր անձին քո ոչ շնորհեցեր։ Եւ լռելն ոչ միայն անկարի, որպէս Յովսեպոս ասէ, այլ և անտրտունմն և անտագնապ։

Զենոնի հարցեալ թէ զինչ ասասցուք վասն քո առ թագաւորն, ասէ. Ոչ այլ ինչ, այլ եթէ ծեր ոմն է յԱթէնս, ըմպելոյ բաժակի՝ լռելոյ ունի զկարողութիւն։

Արիստոտէլ ասէ. Որոյ չէ լռել, նա և ոչ խօսել։

Յըմբեալ գինւոյ անհնար է լռել։

Սմա հարցեալ թէ զինչ է դը-
ժուարարգելի ըմբռնել 'ի մարդ-
կանէ, ասէ. Լռելն զոր ոչ է պարտ
խօսել։

Սոկրատէս՝ յասելն թէ զայլս ու-
սուցանես խօսել և դու լռեա՞ս, ասէ.
Եւ յեսան ոչ է բնաւորեալ հատա-
նել, այլ զսուրն արել առ 'ի հա-
տանել։

Երկուս արասցես ժամանակ խո-
սելոյ. մին՝ զոր գիտիցես յայտնա-
պէս, և միւսն 'ի հարկէ խօսել. յոյժ
լաւ իցէ խօսելն քան զլռելն, իսկ
յայլսն լաւ է լռութիւն։

Ի չար առնէ և 'ի լռկացէ, որ-
պէս 'ի շանէ գաղտառուէ, 'ի լռե-
լութենէն պարտ է առաւել երկչն-
չել քան թէ 'ի ձայնէն։

Թէոպրատէս տեսեալ զպատանի
'ի սեղանի լռելութեան Ճգնելով,
ասէ. Թէ գիտես վասն որոյ լռեաց՝
բարիոք առնես. ապա թէ խրա-
տեալ իցես՝ անիրատաբար լռես։

Պիտտակոս ասէ. Զոր հանգերձ-
ձեալ իցես առնել՝ մի ասիցես, գու-
ցէ 'ի չկարելն՝ ծաղր լինիցիս։

Թէ 'ի մեռաս ինչ ոք գայցի , լռել պարտ է , թէ և խօսնակ ոք ելցէ :

Բաժանեա զօրն 'ի գործ , և լռելութեան մասն հան :

Աղեքսանդրոս 'ի հարցանելն թէ ընդէր Ղակեդմոնացիքն սիրեն ըզպակասաբանութիւն , ասէ . Զի մերձ է 'ի լռելն :

Դիմոկրատէս տեսեալ զոմն զի շատ և անհրահանգ խօսէր , ասէ . Սա ոչ եթէ խօսել կարող է , այլ լռել անկար է :

Սողոն ասէ . Կնքեա զբերան քո լռութեամբ , և զլռութիւն ժամանակաւ :

Սիմոնիդէս ասէ . Կամ զլռութիւն պարտ է ստանալ կամ զբան օգտակար :

Ոչք լռեն՝ ոչ երբէք զղջասցին . իսկ ոչք խօսին՝ բազում անդամ :

Զդիոգինէս նախատէին զբերան ունելով հոտեալ , ասէ . Ի բազմադէմ պատմելոյ զանձաւելին հոտեցաւ բերան իմ :

Կղեսարքոս ասէ . Յօտարս ոմանց նատելով 'ի սեղանի , հարկիւ պատուեա զիմաստասէրն :

Դիոնիդէս ասէ. Լաւ է լռել՝ քան ունայն ինչ խօսել։

Ժ Բ

Բաղդ և Անբաղդութիւն.

Իրոն ասաց. Ոչ հիւանդաց բաղմակեան, և ոչ անմոռաց բախտաւորութիւն օգուտ է։

Հիւանդաց բեռինք, և անմոռաց բարեբախտութիւն միապէս է։

Բաղդն նման է չար պատկերի. զի որպէս զնա՝ բազում անգամ զանարժանն պատկէ։

Բաղդն նման է աղեղնաւորի, որ 'ի նպատակն երբեմն 'ի մօտ և երբեմն 'ի հեռի ընկենու։

Սոկրատէս ասէ. Զի՞ նախատես զդիպուածս ուրուք, զի բաղդն հապարակաց է։

Ժամանակ մարդոյ երևեցուցանէ զՀմարտասէս արիքն, իսկ անբաղդութիւն զիսելքն։

Կղիտարքոս ասէ. Զանբաղդու-

թիւն քո թաքո՛, զի մի զթշնամին քո ուրախ արասցես,

Ոչ ինչ՝ի մարդկայնոցս ստուգապէս կարծեա. և զայս գիտելով՝ ոչ՝ի բարեբաղդելն քո ուրախասցիս, և ոչ՝ի վատաբաղդելն տրտմեսցիս։

Աղեքսանդրոս տեսեալ զԴիոգինէս զի ննջէր՝ի կարասի, ասէ. Ո՞վ կարաս լի իմաստութեամբ։ Եւ նորա զարթուցեալ ասէ. Ո՞վ թագաւոր, կամ մի բաղդի լաւ է ինձ և ոչ խելք կարասով, յոր ոչ մերձակայիցն՝ վատաբաղդին խելքն։ Եւ ոմն՝ի մերձակայից զայն լուեալ ասաց. Շիմ մի իմաստից լաւ է ինձ և ոչ ծովակս բաղդից։

ԺԳ

Գիւնի և Արքեցոբիւն.

Պլիտարքոս ասէ. Ապոկանի աշխարհս հրով և ջրով, և տունք արքեցողաց գինւով։

Դիոգինէս՝ի յոյժ մատուակեալն

հեղոյը զգինին , և 'ի մեղադրելն ա-
սէ. Թէ ըմպեմ՝ զինքն և զիս կո-
րուսանէ. լաւ է սմա միայն կորըն-
չել :

Կղէտոս առ այն որ ասաց նմա՝
չամաչէ՞ս արբենալ, ասաց. Եւ դու
չամաչէ՞ս զարբեցողն խրատել :

Սմա հարցեալ թէ զիարդ լայք
յարբեցութեանն , ասէ. Զոր ինչ
յարբեցութեան գործէ՝ 'ի լուրջ
ժամու առաջի աչաց ունի :

Ամաքարէս ասէ. Իմաստուակելն
բաժակի՝ զառաջինն արբցես առող-
ջութեան , զերկրորդն՝ թշնամա-
նաց , զերրորդն՝ մոլեգնութեան :

Կղեսարքոս ասէ. Անապակ՝ ըզ-
բազումս 'ի սակաւէ հարկ է խմա-
նալ. զի ոչ եթէ 'ի բազմութիւնն
հայելով խելագարի ոք, այլ բնու-
թիւն ըմպողին :

Դժուարին է յորժամ ոք առա-
ւել քան զոր արբցէ խօսեսցի. և ոչ
տեսանելով՝ այլ որպէս 'ի կար-
ծեացն :

Քսենոփոն ասէ. Արբեցող կա-
ռավար և նաւավար և զօրավար մի

են, զի չարչեն զաւէնայն. եթէ նաւ, եթէ կառս, եթէ զօրս, և ոչ ոք 'ի սոցանէ ուղիղ վարի։

Մենանդրոս ասէ. Գինի և թըշնամանք՝ դիտել յանդիմանել առ բարեկամս զբարեկամացն։

Ի գինւոջ մի շատախօս լինիցիս, զի ցուցանիցես հրահանգս. քանզի կաղ է զոր խօսիսդ։

ԺԴ

Շոգմոգք և Շոգմոգութիւն.

Պլատարքոս ասէ. Փայտ 'ի հրոյ մաշի և ոսուն 'ի շոգմոգաց։

Որպէս նապաստակի շունք, նոյնպէս և սիրելւոյ շոգմոգք։

Խնդալ պարտ է ընդ տրամեցուցանելն քան ընդ շոգմոգելն. քանզի նոքա զգաստացուցանեն, և սոքա թոյլս և ծոյլս գործեն.

Դիոգինէս ասէ. Ի վերայ շոգմոգաց՝ որպէս 'ի վերայ գերեզմանաց՝ անուն մարդոյ միայն գրեալ է։

Սմա հարցեալ թէ ո՞ր 'ի գաղա-
նաց չարաչար խածանէ, ասէ. Ի
վայրենեաց օձ և ինձ, և յընտա-
նեաց շոգմոգ և զսպարտող։

Կրատիտաւոսէս զորդի մեծա-
ման տեսեալ 'ի մէջ շոգմոգաց, ա-
սէ. Պատանի դու, ողորմիմ քոմ
պաշարմանդ։

Սոկրատէս ասէ. Ատեա զշոգ-
մոգան իբրև զմոլորեցուցիչս. քան-
զի երկոքինդ՝ զայնոսիկ ոչք հաւա-
ման նոցա՝ վաղվաղակի ՀԵՌԱՏԵՆ։

ԺԵ

Վասն պատուոյ հարց.

Արիստոտէլ ասէ. Պարտ է որ-
դւոյ պատուել զՆայր առաւել քան
զծառայս, զի որդւոցն՝ բնութեամբ
է հնազանդութիւն, և նոցա 'ի
հարկէ։

Սոկրատէս ասէ. Այնպէս լեր
առ ծնողս քո, որպէս կամիս լինել
առ քեզ զորդիս քո։

Աղեքսանդրոս Թագաւոր 'ի հարցանելն թէ զո՞վ մանաւանդ սիրես, զՓիլիպպոս հայր քո թէ զԱրիստոտէլ վարդապետն քո, և ասէ. Զմինն՝ զի կենդանի եղև ինձ պատճառ, և զմիւսն՝ զի բարիոք կենդանի։

Սմա զծանր հրամանս տայր մայր իւր Ողոմպիադ, ասէ. Ո՞վ մայր, դառն իմն ոնտահարկ ինն ամսեայ ժամանակի պահանջես յինէն։

Եւրիպիդէս ասէ. Որ 'ի ժամանակի կենաց իւրեանց զծնողս իւր պատշաճաբար պատուեսցէ, նա 'ի կեանս և 'ի մահու՝ Աստուծոյ սիրելի է։

Սողոնի հարցեալ՝ թէ ընդէր Հելլենացւոց օրէնադիրքն պատիժ ոչ դրեցին գանողացն զծնողսն, ասէ. Զի ոչ գիտէին թէ յայնքան լրբութիւն գան ոմանք։

Պղատոն տեսեալ զոմն մեծաբանել 'ի վերայ ծնողաց իւրոց, ասէ. Զամաչէ՞ս մեծաբանել 'ի վերայ, յորոց մեծաբանելոյ արժանի եղեր։

Ոչ գոյ մեծագոյն պատիւ զաւակաց՝ քան թէ բարի ծնողաց լինիցին

զաւակք, և ծնողացն զբարի պա-
տիւ արժանաւորապէս մատուցա-
նել։

Սոկրատէս ասէ. Որպիսի հաս
մատուցանես ծնողացն քոց, զնոյն
'ի ծերութեան քում ընկալցիս
յորդւոց քոց։

ԺԶ

Յաղագս դատարարակութեան որդւոց.

Եպիքտիտոս ասէ. Զորդիս քո
փութա՛ խրատեալս թողուլ քան
թէ հարուատս։

Ընդ որդիս մի՛ ծիծաղեսցիս, զի
մի՛ յետոյ լացցես զնոսա։

Փեսայի թէ հանդիպեցար՝ գտեր
որդի, ապա թէ ոչ՝ կորուսեր ըզ-
դուստրն քո։

Դուստր ստացուած օտար է, և
թշնամանք հօր։

Զվիւթագորի զդուստր Արիս-

տուսելի հարցեալ, Ո՞ր գոյնն գեղեցիկ, ասէ. Որ յամօթոյ։

Դեմոսթենէս Ճարտար՝ ասէ. Ազատ մարդոյ մեծ հարկաւորութիւն է ունել զամօթ. իսկ ծառայի տանջանք մարմնոյ է ունել զամօթ։

ԺԷ

Յաղագս օրինաց.

Որպէս մարմին առանց հոգւոյ մեռեալ է, նոյնպէս և հոգի առանց օրինաց մեռեալ է և աւերակ։

Կիւրոսի հարցեալ թէ զո՞վ ատես յանիրաւաց, ասէ. Որ օրինաց ոչ հնազանդին։

Սեղեւկոս զուկարացւոց քերթողն և օրէնադիր, զօրէնս՝ սարդի ոստայնից օրինակէ. քանզի 'ի սարդի ոստայնն յորժամ Ճանճ կամ մժիկս կամ յայլ տկարագունից անկանի, ըմբռնի անդրէն. իսկ յորժամ պիծակ կամ մեղու կամ այլ ինչ յայսպիսեաց՝ վաղվաղակի խզեն

հանդերձելով և առ ոտն հարկանելով. նոյնպէս և օրէնք յորժամ յաղքատաց զոք ըմբռնեն հաւանեցուցանելով ցուցանեն զզօրութիւնն. իսկ յորժամ 'ի մեծամեծաց կամ 'ի զօրեղաց, խզեն վաղվաղակի և արտաքս ելանեն:

Սոլոնի հարցեալ թէ ո՞րպէս շինի քաղաք, ասէ. Յորժամ քաղաքացիքն իշխանաց հնազանդին, և իշխանքն օրինաց:

Ուր դեղք բազումք և բժիշկք են, անդ և ցաւք բազմապատիկք. և ուր օրէնքն յաճախեն, անդ և անօրէնութիւնք յոլովք:

Բնութիւն քաղցր՝ ամուր քան զօրէնս. քանզի զնա ոչ ոք կարէ փոխել, իսկ զօրէնս բազումք:

Սոկրատէս ասէ. Օրէնք կամին բարեգործել զժամանակն, այլ սակայն ոչ կարեն. զի առ հնազանդեալսն միայն ցուցանեն զօրութիւնս:

Որպէս փրկութիւն հիւանդաց բժիշկք են, այնպէս և զրկելոցն օրէնքն:

ԺԸ

Յաղագս անհառակոտքեան .

Մենանդրոս տեսեալ զոմն զի զտուն հայրենի անցուցեալ էր առակ սեղանօք, և նստեալ ուտէր պտուղ ձիթենւոյ և ըմպէր ջուր և էր յարևն, ասէ ցնա . Ո՛ պատանի, թէ այդպէս պարկեշտութեամբ էիր ճաշակեալ, ոչ այդպէս աղքատաբար ընթրէիր, այլ բազում և անուշահամ խորտիկք շատանային :

Յոյժ բարեբաղդիկ լինել առաւել քան զարժանն, պատճառք վատաբաղդութեան անմոխցն լինի :

Քանոփոն ասէ . Ոչ 'ի սկզբանէ հանդիպիլ բարեացն այնպէս ջարջարէ, որպէս հանդիպիլն և զրկիլ անդրէն :

Զենոն առ այնոսիկ որ առաւել փափկանային և պարծէին զի շատ

ունէին գանձս, ասէ. Ապա ուրեմն ոչ մեղադրելի են խոհակերքն յաղի առնել զխորտիկն, զի ունին շատ աղ:

Ժ Թ

Յաղագս խրատուց.

Պղիտարքոս ասէ. Օտարքն 'ի ճշմարտութենէ, իսկ անխրատքն յիրէ իւրեանց մոլորին հանապազ:

Պղատոն ասէ. Ամենայն մակացութիւն որոշեալ յարդարութենէ և յայլոց առաքինութեանց, խաբէութիւն և ոչ իմաստութիւն ասի:

Սոկրատէս ասէ. Որպէս զմեղուն տեսանեմք 'ի վերայ ամենայն ծաղկանց նստեալ, սակայն զպիտանին առնու, նոյնպէս ամենայն իրաց պարտ է հմտանալ, սակայն զօգտակարն առնուլ:

Պարտ է զբանից գանձարանն պահել քան զընչից:

Դեմոսթենէս զարմատ խրատուն դառն ասէր և զպտուղն նորա քաղցր:

Խրատն բարեշնորհիցն զարդ է, իսկ վատաշնորհիցն ապաւէն։

Զքաղաքս արամբք և ընչիւք, իսկ զանձինս՝ ուսմամբ և խրատու պարտ է պայծառացուցանել։

Սոկրատէս տեսեալ զոմն մեծատուն անհրահանգ և առանց խրատու, ասէ. Ահա ոսկի անասուն։

Եւ 'ի հարցանելն մա որուսն թէ զինչ է 'ի կենդանեացս գեղեցիկ, ասէ. Մարդ խրատու զարդարեալ։

Սողոն քանզի նախատիւր թէ 'ի դատաստանի ջատագով վարձեաց, ասէ. Եւ 'ի ժամ ընթրեացն խոհակերս ստացայ։

Ի

Ցաղագս բժշկաց.

Տրոփիլոսի ասեն ոմանք հարցանելով թէ ո՞վ ետցէ բժիշկ կատարեալ. և նա ասէ. Որ զհնարաւորն և զանհնար ճանաչէ։

Երինոս ասէ. Բժիշկ և բարեկամ

զայն համարեա որ 'ի նեղութեան օգնել կարեն։

Նիկողիոս չար ումեմն բժշկի ասելով մեծ ունել զօրութիւն յայնմ արուեստի, ասէ. Ո՞րպէս ոչ. քանզի այնչափ սպանանելով անձին մեղադրանս ոչ ունի։

Սա զբժիշկ ոմն բարեբաղդ անուանէ, ասելով թէ զյաջողութիւն և զմանկաբաղդութիւն քո արեգակն տեսանէ, իսկ զսխալանան և զվնասն՝ երկիր ծածկէ։

Սա զբժիշկ ոմն գովէր ասելով. Յոյժ գիտեմ զհմտութիւն քո և գովեմ, զի ոչ թողուս զհիւանդս յերկարել 'ի ցաւս, այլ վաղվաղակի փոխադրես 'ի կենաց։

ԻԱ.

Յաղագս երդման.

Սոկրատէս ասէ. Պարտ է մարդոյ զբանս՝ վերագոյն երդմանց առնել։ Եւ լինի երդումն վասն երկու

իրաց. մին՝ վասն զի զանձն 'ի կաս-
կածանաց ազատել, և երկու՝ զբա-
րեկամն հանել յորոգայթից. այլ
վասն ընչից՝ ոչ եւս:

Որ երդման ընկերին չհաւատայ,
դիւրին է նմա և սուտ երդնուլ:

Երինոս ասէ. Բազումք 'ի մարդ-
կանէ պատուիրեն բարեկամացն
յիրաւին երդնուլ. այլ ես քնաւ ոչ
թուչեալ յերդմնասիրութիւն՝ գովե-
լի ասեմ:

ԻԹ

Յաղագս մեղաց խոստովա-
նութեան.

Արիստոտել ասէ. Ոչ արտաքոյ
անմեղին կացուցանէ զանձն իւր, որ
զիւր մեղսն հեզութեամբ խոստո-
վանի:

Դիմոսթենէս ասէ. Ախաք մարդ-
կան ոչ գովելով և ոչ թաքուցանե-
լով ողջանան, այլ պատմելով բժշ-
կացն, նոյնպէս և ոչ մեղքն:

Պիւթագորաս ասէ. Զմեզս քո մի փութացիս ծածկել բանիւք, այլ խոյտառակաբար յանդիմանութեամբ բժշկել:

Կղեմաղքոս ասէ. Ոչ զհուր ընդ հանդերձից 'ի մի պարտէ ժողովել, և ոչ զչարութիւն ընդ երկար ժամանակաւ 'ի սրտի:

Ի Գ.

Յաղագս նախախնամութեան.

Եպիկուրոս ասէ. Շնորհ երանելի բնութեանն, որ զհարկաւորն մեզ գիւրաստացս արար, իսկ ըզգժուարաստացսն ոչ հարկաւոր:

Թէոպդիմոս ասէ. Մի՛ պատճառ. չարի զԱստուած կարծիցես, և մի առանց նորին վատաբաղդիլ զմեզ կարծիցես:

Պղատոն ասէ. Յորժամ խորհի Աստուած բարի առնել քաղաքի. արս բարիս յարուցանէ, առնէ քաղաքացիս. իսկ յորժամ չար լինէ

խորհի վասն նորին, բառնայ զբաբիսն յայնմ քաղաքէ։ Նոյնպէս և ոչ ուսանելով գոլ և ոչ բնութեամբ զառաքինութիւն, այլ աստուածային բանին հասանէ ստացելոցն ամենայնի, և աստուծով՝ բաղդ և ժամանակ զմարդիկ նաւավարեն։

Դիմադրոս ասէ. Որչափ արդարոցն գործակից լինի Աստուած, այնչափ և անիրաւացն։

Բիանդոս ասէ. Զխնդրողն յԱստուծոյ խելս բարիս, և զինքեանս անիրատոս գոլ՝ անիմայ ասեմ. քանզի ոչ դեղագործողի՝ աղօթիւք տացի գիծ և դեղեցկութիւն նկարից, և ոչ երաժշտականաց՝ երաժիշտ և հագնեցգութիւն, եթէ ոչ ուսմամբ ընդունին զհմտութիւն արուեստից. նոյնպէս և ոչ իմաստուն հնար լցէ ումեք աղօթիւք լինել, եթէ ոչ ուսմամբ ստանալով առցէ։

Եղեւկոս ասէ. Որպէս պատուիրեցաւ և ամենեցուն այսպիսեաց՝ քաղաքաց և քաղաքուհեաց և բնակչաց՝ յիշել զԱստուած զի է, և գա-

սասատան արձակէ 'ի վերայ անիրաւաց՝ յորում լինի վախճան ամենայնի։

Ի Դ

Յաղագս կնոջ չարաբարոյի.

Սէքստոս ասէ. Ի վերայ չար կանանց բարուք է կնիք։

Դիմոկրատէս ասէ. Ընդ իշխանութեամբ կանանց գրաւիլ մեծ նախատինք են։

Կինն Դիմոգինէ 'ի ժողովս կանանց յասելն ցնա թէ զիա՞րդ 'ի մեծութեան գոլով՝ դու միայն 'ի կանանց ոչ զգենուս զարդ, ասէ. Կնոջ զարդ այրն իւր է. զի չէ զարդ այն՝ որ յոչ գոլ առն կապտեն զնա։

Պիւթագորաս ասէ. Ի հուր և 'ի կին անկանել մի է։

Փիլաքսիոս յասելն ցնա թէ զիա՞րդ Սոփոկլէս քաղցրագոյն 'ի նեղքս ածէ զկանայս, և դու չարս կոչես, ասէ. Նա ո՛րպէս պարտ է լինել

կանանց ասէ. իսկ էա՝ որպէս էին կանայք։

Մենանդրոս ասէ. Ղուկիոս վասն կնոջն զոր սիրեաց՝ լուսով ճրագի կորեաւ. զի կին նորա ճրագ էդ 'ի ծովեզերին մինչդէռ լոլայր 'ի ծովուն. դիմեաց երթալ առ կինն. և նա անցոյց զճրագն, և հեղձաւ այրն 'ի ջուրս անողորմ։

Փիլիատոն ասէ. Չար ինչ քան զկին չկայ. զի հայրն և մայրն ոչք անուցին զնա, յաւելուն և տան 'ի վերայ գլխոյ թախանձանս, և հանեն 'ի տանէն զնա, զի ապրեսցին 'ի չարէ նորա. և որ ընդունի՝ տանի տուգանս և չարիս 'ի տուն իւր, և խնդայ՝ քանզի չէ տեղեակ չարի նորա։

Դիոգինէս ասէ. Տեսի աղջիկ մի զի ուսանէր դպրութիւն, ասեմ. Ահա սուր որ կորուսանէ զմարդիկ՝ որ ոչ առնուն 'ի միտ։

Քան զկնոջ մարդոյ երախտիս առնել, 'ի գետ լաւ է ընկենուլ. զի չիք կնոջ 'ի միտ առնուլ զերախտիս, զի ամենայն ցաւոց գոյ բժշկութիւն։

Մենանդրոս ասէ. Յայտանէ նմա զկին մարդ, և 'ի միտ առ զջրութիւն. զի զԱգամեմնոն արքայ զոր ամենայն աշխարհ սիրէին, իբրեւ եկն 'ի տուն 'ի պատերազմէ՝ 'ի ձեռն կնոջ սպանաւ:

Կին մարդ բնաւին բարի ոչ խօսի, այլ և ոչ զանձնէ:

Հարիւր այր 'ի միում տան կարեն կալ, բայց երկու կին 'ի միում տան կալ ոչ կարեն:

Չար է կին մարդ, բայց առաւել յայնժամ՝ յորժամ երկու անուանք ունիցեն՝ կին և մօրու:

Լաւ է ընդ առիւծու 'ի լերինս բնակել քան ընդ կնոջ անզգամի 'ի տուն:

Թէ կամիցիս կեալ հանգստեամբ, բնաւ հետ կնոջ մի խօսիր:

Կարիճ մի ասաց ցկինն, թէ Խայթոցս չար ոչ է քան զքո լեզուդ. — Զի՛արդ ուցէ. — ասէ կարիճն. Յորժամ ես խայթեմ, դեղ դտանի. իսկ դու միով բանիւք չար ցաւոք վերաւորես, և չիք նմա դեղ բժշկութեան. զի չար՝ զոր դու չառ-

նեա, չէ չար. և մահ՝ զոր դու չասա-
նանես, չէ մահ։

Փիլիստոն ետես կին մի կոյր.
Սա ասէ յականէ չարաց է. բայց թէ
քննիցես՝ չար ևս գտանիցես զկինդ։

Եթէ ասիցէ քեզ կին քո թէ
խեղդիմ, ծաղր արա զնա. բայց դու
խեղդելոյ անձին քո պատրաստեա։

Սուր և պատերազմ ոչ եղեալ ա-
ռանց կնոջ, և ահա վկայէ Եղիոն։

Դիոգինէս ետես զԵրակլէս զի
ունէր գաւազան, և կայր առ
դուրս ապարանից մեծատան. և
հարցաւ Զի՞ կաս ատ. ասէ. Զի
չար լինչ և ապականիչ մի մոցէ այսր։
Հայեցաւ Դիոգինէս և ետես կին
մի զի ելանէր յապարանից, ասէ.
Ամենայն չար գազանք լի է ա-
պարանքդ։

Դիոգինէս ետես կին մի զի տա-
նէր գետ. ասէ. Կորիցէ չարաչար
ամենաչարդ։

Զծիծառն յամարայնի տեսա-
նեմք, ձմերայնի ոչ. և ծիծառն ըզ-
ցայգն ոչ խօսի, այլ զցերեկն միայն.
իսկ կին մարդ ոչ զցայգն ոչ զցե-

րեկ, ոչ ամարայն և ոչ ձմերայն ոչ դադարէ կամ յագի կռուով։

Տեսէք զյոնս կնոջ և զձօձեալ մատանցն և զխօսս բերանոյ, զի երկուքինչ չար են 'ի նմա, և ամենայն չարիք անտի բուսանին։

Քան զամենայն որ ստեղծաւ յերկրի՝ առաւել չար է կին. քանզի գազան չար ընդ զուգակցի իւրոյ ունի զխաղաղութիւն, և կին ոչ։

Ամենայն մարդ որ յիւր սեղեաց գնայ և 'ի կնոջ մարդոյ ձեռս անկանի, կրկին կորնչի. մի՝ վասն օտարութեան և մի վասն կնոջն։

Կին ուտէ և ըմպէ ընդ առն իւրում, և աչք առ այլս ակնարկէ։

Տեսի կին մի պառաւ՝ ծարուրեալ և զարդարեալ և օծեալ. ասեմ. Ի կենդանեացս հրաժարեալ ես, մայրիկ, և 'ի մեռեալս ոչ բարուք զարդարիս։

Փիլիսոն ասէ. Կնոջ մարդոյ մի հաւատար. թէպէտ և մեռեալդնի 'ի գերեզմանի, սակայն մի՛ հաւատար։

Խ Օ Ս Փ

ՍԵԿՈՆԴՈՍԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

Ա Ռ

ԱՆԴՐԻԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ

Խ Օ Ս Փ

ՍԵԿՈՆԴՈՍԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ԱՌ

ԱՆԴՐԻԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ

Ընդ ժամանակն ընդ այնոսիկ, յորում Անդրիանոս 'ի Պարսս երթայր, և իբրև եկն յԱթէնս, լուաւ զՍեկոնդէ եթէ կորովի իմաստասէր է, և անխօսութեամբ զինքն հանձարեալ է. որով և կոչեալ առ ինքն բազում աշխատանօք մաքառեալ 'ի հարցմունք առակաց, և նա ոչ ինչ ետ պատասխանի։ Եւ թագաւորն զայրացեալ ընդ անմեծարանն առաջի սիւնկղիտոսին, կոչեաց զսուրհանդակն զի սպանցէ զնա, և պատուէր տուեալ ասէ.

Երթ նախ բռնադատեա, եթէ խոսի՝ սպան. եթէ ոչ՝ կենդանւոյն այսր ածջիր։ Եւ դահճապետին վաղվաղակի զհրամանն կատարեալ, տանէր 'ի նպատակն սպանանել. և ասէր. Հասեալ է օր մահու և կենաց. և զմահաբեր վաղակաւորն 'ի վերայ խաղացուցեալ փայլակնաձև՝ յեղյեղէր ասելով. Բան հաս 'ի բերանոյդ, և ոչ բարձցի գլուխդ 'ի պարանոցէդ. խօսքդ յօդս տարածեսցի, և ոչ հեղցի արիւնդ յերկիր։ Նա ոչ զերկիւղ մահու զմտաւ ածեալ, և ոչ զշողիւն սուսերին, լռութեամբ արիանայր. և զինուորին վաղվաղակի ածեալ առաջի թագաւորին կացուցանէր։ Ապա նորա այնուհետև սկիզբն արարեալ պատասխանւոյ։

Ասէ Անդրիանոս. Զի՞նչ է աշխարհ։

Պատասխանի. — Աշխարհ մեք եմք որ զհաստատութիւն և զժողովս երկրի ունիմք, և զամենայն որ 'ի նոսա է։

Զի՞նչ է Աստուած։

— Ինքնածին տեսիլ, որ փակէ զա-

մենայն և ինքն յումեքէ ոչ փակի. իմաստ խնդրելի, իմաստուն անմահ։

Զի՞նչ է ծով։

— Գոգ աշխարհի, պատկ ծովեղէն. ընդերկարութիւն ջրեղէն, անբաւ հաստատութիւն. մայր աղի, հաւաքիչ ամենայն ջրոց, որպէս գոտի զտիեզերքաք, աշխարհի ասպնջական։

Զի՞նչ է եթեր։

— Օդք տարածք և թաթաւունք, տեսիլ են սուրբ, յստակ, լի հողմաք բազմութեան. զօրութիւն որ յամենայնն հատանէ. բնութիւն տարած, արեգական յորդորիչ, ծնիչ հրոյ և ջրոյ։

Զի՞նչ է տիւ։

— Հանդէս որ լի է աշխատութեամբ, շրջանակ երկոտասան ժամանակական. սկիզբն ամենայն ցաւոց, յորդորումն աշխարհի, երկրաժեշտ գործոյ, հոգք ծփալեցք, կենդանեաց համբոյրք առ 'ի միմեանս տեսանելոյ. յուշարար անդադար, բնութեան հայելի, թիւ՝ որով յաւիտենականք համարին։

Զի՞նչ է արեգակն։

— Ակն երկնաւոր, նահատակ գի-
շերոյ, ջրջանակ երկնաւոր. աշխարհի յանդիմանիչ, անմաշ բոց. ըզգեստ պտղոց, անանց Ճառագայթ, անպակաս պայծառութիւն, զըտեալ ղամպար, երկնային Ճանապարհորդ:

Զի՞նչ է լուսին:

— Կարմրութիւն երկնաւոր, մխիթարիչ գիշերոյ, անդոց Ճանապարհորդ, նաւորդաց մխիթարիչ, հաստատեալ'ի յօդոյ. բոլորակ՝ որուն՝ չհասանի ոք. անծագ տեսիլ, կենդանեաց հանդէս, պահպանորդ գիշերուոյ, դայեակ անձրևոյ, մայր պտղոց, յաւիտենից նշանակ:

Զի՞նչ է մարդ:

— Նման Աստուծոյ, մարմին հոգեկիր և մտաւոր. տաՃար հոգւոյ, դոյզնժամանակեայ տեսիլ, գործի աՃառապինդ՝ ոսկերքք և ջղք և այլովքն հանդերձ. դէտ աշխարհի, բաղդի խաղալիկ, բարի հարեւանցիկ, կենաց մաշիչ, փոխանակի յաշխարհէ. ինքնայօժար յամենայն, արհամարհիչ ամենայնց, տեսիլ յաւիտենական:

Զ՞ինչ է գեղեցկութիւն։

— Նկար բնութեան, և բարի յանձնէ ունի. ստացուած որ անցանէ, ծաղիկ որ թարշամի. դրոշմած շընչաւոր, տեսիլ ցանկալի։

Զ՞ինչ է սէր։

— Խնդիր բարեաց, մարտ անեռեւոյթ, վարանելոց մխիթարութիւն, թիկունք թշուառականաց, ինչ մի՝ որ ամենեցուն պիտոյ է և ոչ է՝ի միջի։

Զ՞ինչ է կին։

— Առն մխիթարութիւն, ընտանի դաղան, ոգւոց պատճառք, իժ ըղդեստիւ պատեալ. ինքնայօժար՝ի կոխ, հանապազորդեան ինաս՝ի տանն, ձմեռն անժոյժ, առն ընկըղմումն, աշխարհի կործանումն, սուր որ ոչ տայ զգալ, կռիւ բազմադիմի, կենդանի չար. ստատար՝ի ծնունդս մարդկան, պարաւանդ անեռեւոյթ։

Զ՞ինչ է մեծութիւն։

— Բեռինք ոսկեղէնք, ցանկութեանց արբանեակ, անիրաւ վայելչութիւն, կապեալ ընդ երկիւղի, կասկած անդուլ, ագահաց թշուա-

ռութիւն, երկն հանապազորդեան, իւրք դիւրափոխ, բազմաց ըղձալի, անդաձոյ խմաստք, ծփումն անդուլ. փոփոխումն անդադար. իւրք են ամենեցուն նենգի և ինասի. հոգք վերադրեալք 'ի մարդկան կամակարութենէ:

Զի՞նչ է աղքատութիւն:

— Բարի ատեցեալ, մայր առողջութեան, խափանիչ ամենայն ցանդութեանց. վարք անհոգք, անխաբ ստացուած, վարդապետութիւն հնարեալ, գտակ խմաստութեան, ստացուած որիշ 'ի զրպարտէ. աջողուած՝ որ զկնի ոք ոչ ընթանայ. գանձ հաստատուն, բազդ անհոգ:

Զի՞նչ է նաւավար:

— Ալեաց Ճանապարհորդ, ծովուն մշակ, հողմոց ուղեկից, աշխարհի օտար, ձմերայնւոյ նահատակ, նաւահանգիստ սքանչելի, ղուղորդ մեռելոյ, կցորդ կորստեան, ծովականաց մենամարտիկ, ինքնայօժար 'ի մահ:

Զի՞նչ է նաւ:

— Գործի երերուն, տուն առանց

հիման, հմայեալ գերեզման, խաբեբայ տախտակ, հողմոց ուղեկից, բան թռուցեալ. բախտ կապեալ, խաղալիկ հողմոց, ղուղակ գերեզման, թռչուն փայտեղէն, ձի ծովեղէն. աներեւոյթ փրկութիւն, նիւթոյ գործ, կորստեան ակնկալութիւն:

Զի՞նչ է միայնակեցութիւն:

— Մահ 'ի վաճառումն, նահատակի զենումն, ինքն գիմեալ 'ի մահ. բախտի բեկումն, վարդապետեալ թշուառութիւն. պարայաղթութեան հնարք:

Զի՞նչ է մշակ:

— Ժամանակաց արբանեակ, անձրեւաց մուտակարար, մնունդ վարիուառանց ծովու վաճառական, ծառոց տնգիչ, աղքատութեան հոյկապ. բժիշկ հողմոց, ժամուց դաստիարակ:

Զի՞նչ է քուն:

—Աշխատութեանց հանգիստ, բժշկաց սատար, կապելոց լուծումն, տքնեցելոց խնամաք, հիւանդաց խղճք, մահու պատկեր, ուսումն հանդարտաղորդեան:

Զինչ է ծերութիւն:

— Դիւրագիւտ չար, կենդանի հաղ-
համահ, սպասիկ մահու, քնալից
ծաղր, ապշութիւն առ իմաստու-
թեանց օտար. պահակ ցպոյ, ցան-
կութեանց օտար, մեռեալ զեռուն:

Զինչ է մահ:

— Քուն յաւիտենական, քակտումն
մարմնոյ, հիւանդաց խնդրուածք,
թշուառականաց իղձք, հոգւոյ հե-
ռացումն, մեծատանց երկիւղ, աղ-
քատաց պանծալի. քակտումն ան-
դամոց, հայր քնոց, հրաժեշտ յա-
վիտենական:

ՑԱՆԿ

ՊԱՏՃԱՌՔ ՍՈՓԵՐԱՑ ՀԱՅԿԱ-
ԿԱՆԱՑ . 5
Ա . Իմաստութիւն . 9
Բ . Ուսումն . 14
Գ . Բարեկամութիւն և Բա-
րեկամք . 16
Դ . Իշխանութիւն և Իշխանք . 20
Ե . Արիութիւն .
Զ . Յաղագս ընչից . 23
Է . Արծաթասիրութիւն . 26
Ը . Յաղագս փառաց . 29
Թ . Յաղագս մահուան և փս-
խելոյ 'ի կենաց . 31
Ժ . Վասն լաւագղութեան . 34
ԺԱ . Յաղագս լռութեան . 36
ԺԲ . Բաղդ և Անբաղդութիւն . 39

ԺԳ. Գինի և Արբեցութիւն. 40
ԺԴ. Ղոգմոգք և Ղոգմոգութիւն. 42
ԺԵ. Վան պատուոյ հարց. 43
ԺԶ. Յաղագս դատաիարակութեան որդւոց. 45
ԺԷ. Յաղագս օրինաց. 46
ԺԸ. Յաղագս անառակութեան. 48
ԺԹ. Յաղագս խրատուց. 49
Ի. Յաղագս բժշկաց. 50
ԻԱ. Յաղագս երդման. 51
ԻԲ. Յաղագս մեղաց խոստովանութեան. 52
ԻԳ. Յաղագս նախախնամութեան. 53
ԻԴ. Յաղագս կնոջ չարաբարոյի. 55
Խօսք Սեկոնդոսի խմաստասիրի առ Անդրիանոս կայսեր. 63

10

12
13

15
16

18
19
0
1

2

3

5

3